16348

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0201-22

Ձեռնարկողը՝ «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր 0014, Ադոնցի փ 13/17

Գործունեությունը՝ **Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող

Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0201-22

<30> 12 2022թ.

Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ , Տեխնիկական զեկույց
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, գ. Սասունիկ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 6-րդ կետի բ. ենթակետի՝ «թափոնների օգտագործման բնագավառում» Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում կոշտ կենցաղային թափոնների /ԿԿԹ/աղբավայրի կազմակերպումը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներածական մաս. Հաշվի առնելով աղբահանության վիճակի բարելավման հրատապությունը և ֆինանսական խնդիրները, Աշտարակի համայնքապետարանը կայացրել է որոշում Սասունիկի չկազմակերպված աղբավայրը աճուրդով տրամադրել «Էկո-կենտրոն» ՍՊ ընկերությանը, /այսուհետ՝ Ընկերություն/ որի կողմից կշահագործի այն և կհամապատասխանեցվի սանիտարական աղբավայրի պահանջներին: Այդ նպատակի համար աղբավայրի 8 հա մակերեսով տարածքը վարձակալական հիմունքներով տրամադրվել է Ընկերությանը՝ կենցաղային աղբավայր կազմակերպելու նպատակով: Աղբավայրի կազմակերպման տարածքը տեղադրված է Սասունիկ – Երևան խճուղու մերձակայքում, գտնվում է Աշտարակ քաղաքից 9կմ, Սասունիկ բնակավայրից 3.5 կմ, մոտակա՝ Պռոշյան բնակավայրից 2.5 կմ հեռավորությունների վրա: Հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների (կադաստրային ծածկագիրը՝ 02-095-0185-0027):

Դիտարկվող տարածաշրջանը բնութագրվում է չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներով: Անմիջապես աղբավայրի տարածքը նախկին հանքավայրի տարածք է, որտեղ հողածածկն ամբողջությամբ խախտված է, բացակայում են բնական բուսածածկը և վայրի կենդանիների բնակատեղիները: Թափոնների թաղման տարածքում գրունտը ներկայացված է կավավազային կազմով, կավային շերտի հզորությունը 2.0-3.5 մետր է: Դիտարկվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 25 մետր խորության վրա: Տարածքի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են աղբավայրի համար /մասնագիտական եզրակացությունը ներկայացված է հայտին կից փաստաթղթերում/: Ապահովված է քաղաքաշինական նորմերով բնակավայրերի համար սահմանված

կենցաղային թափոնների աղբավայրերի համար՝ 300մ սանիտարապաշտպանիչ գոտին:

Աղբավայրից 1.5 կմ հեռավորթյան վրա ջրբաժանի մյուս կողմով անցնում է ոռոգման ջրանցք, որը աղբավայրի շահագործման ընթացքում չի կրի աղբավայրի ազդեցությունը:

Նկարագրական մաս. Ընկերության կողմից նախատեսվող գործունեության շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի բնակավայրերի կոշտ կենցաղային թափոնները տեղափոխվելու են Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գործող աղբավայր: Ծրագրի իրականացման շրջանակներում ծառայություն է մատուցվելու աղբավայրին հարակից՝ Արագածոտն մարզի Աշտարակ, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ագարակ, Կարբի, Փարպի, Կոշ, Ուշի, Օհանավան բնակավայրերին: Աղբավայրում նախատեսվում է ընդունել բնակելի տարածքներում բնակչության կենսագործունեության ու սանիտարական մաքրման արդյունքում առաջացած, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների: Անմիջապես բնակիչներից աղբ չի ընդունվելու: Թափոնները հավաքվում և աղբավայր են տեղափոխվում համայնքային սանիտարական մաքրման ծառայության կողմից, որոնց պատասխանատուների կողմից բացառվելու է վտանգավոր թափոնների ընդունումը:

Աղբավայրը նախատեսված է 25 տարի շահագործման ժամկետով, օրեկան՝ 10-30 տոննա կենցաղային և սանիտարական մաքրման արդյուքում առաջացող թափոնների ընդունման և պահեստավորման /թաղման/ համար: Սույն նախագծով աղբավայրի թափոնների պահեստավորման համար նախատեսված 8 հա տարածքից առաջին փուլում կշահագործվի 4 հա-ը: Նախատեսվող աղբավայրում ԿԿԹ-ների տեղադրման կանխատեսվող տարեկան ծավալները ներկայացված են հետևյալ ցուցանիշներով՝ աղբավար տեղափոխվող ԿԿԹ-ի տարեկան ծավալը՝ - 29.000 խ.մ, որից՝ Աշտարակ քաղաքի կոմ. ծառայուունների և հարակից խոշորացված համայնքներ /բնակիչներ, սան. մաքրում/- 27.500 խ.մ, այլ իրավաբանական անձինք /կենցաղային թափոններ/ - 1.500 խ.մ: Կոշտ կենցաղային թափոնների ընդունման և տեղադրման ծառայությունների սակագինը սահմանվում է արտադրական ծրագրի հիման վրա, իսկ սակագների հավելավճարները՝ կոմունալ կազմակերպության ներդրումային ծրագրի հիման վրա:

Աղբավայրի կազմակերպման գործընթացները ներառում են հետևյալ տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները.

- Աղբավայրում թափոնների տեղադրումը և տոփումը կատարվում է երկու հարկաբաժիններով, յուրաքանրյուր հարկաբաժինը՝ 2.5 մ բարձրությամբ: Յուրաքանչյուր 1 մետր հաստությամբ տոփանված թափոնները մեկուսացվում են 0.25-0.30 մ հաստությամբ հողաշերտով:
- Աղբավայրի համար պահանջվող 2.5 մետրը բարձրության ապահովման և խտության ստուգման նպատակով նախատեսված է տեղադրել չափման սյուներ /ռեպերներ/:
- Աղբավայրի համար նախատեսված են մուտքի և ելքի հսկիչ կետեր, մեքենաների անիվների ախտահանման կետ /որտեղ մեքենաների ելքի ժամանակ կատարվում է անիվների պարտադիր ախտահանում՝ լիզոլ տեսակի 3%-ոց լուծույթով/:
- Առաջին հերթի փոսորակի գրունտը/հողը տեղադրվում է աղբավայրի պարագծով նախատեսված տարածքներում, իսկ երկրորդ և երրորդ հերթի փոսորակներից առաջացած հողն օգտագործվում է առաջին և երկրորդ հերթերի

հատվածներում՝ թափոնների մեկուսացման համար /1 մ³ թափոնների մեկուսացման համար անհրաժեշտ է 0.25 մ³ հող/:

- Աղբավայրը նախատեսված է 925.000 մ³ (ոչ տոփված վիճակում) կամ 231.250 տոննա (0.210 տ/մ³) կենցաղային թափոնների (աղբի) համար:
- Ամառային չոր սեզոններին նախատեսված է աղբավայրում թափոնների խոնավացում՝ բարձրացնելու նպատակով խտացման հզորությունը և կանխելու համար հրդեհներին առաջացումը /1մ³ թափոնի համար պահանջվող ջրի ծախսը կկազմի 10 լիտր:

Աղբավայրում նախատեսված է տեղադրել պահուստային ջրի տարողություն: Սպասարկող անձնակազմի համար նախատեսված է տնակ, որում առկա է սանիտարական հանգույց, հանգստի սենյակ և սննդի ընդունման սենյակ:

Աղբավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները պայմանավորված են աղբի տեղափոխման, կուտակման, զտման և տեղակայման աշխատանքների հետ: Օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է աղբի քայքայման /անաերոբ խմորում/ ընթացքում առաջացող աղբավայրային գազի /կենսագազ/ արտանետումներով: Խմորումն անաերոբ է, քանի որ աղբը տեսակավորումից կծածկվելու է հողային շերտով և հետագա գործընթացներն իրականացվելու են առանց թթվածնի առկայության: Աղբավայրերում առաջացող կենսագազը հիմնականում պարունակում է ածխաթթու գազ և մեթան: Ըստ նախագծի կենսագազի հիմնական քանակները կսկսեն առաջանալ աղբավայրի շահագործումից մոտավորապես 3 տարի հետո: Աղբի քանակով պայմանավորված համայնքապետարանը այս փուլում նպատակահարմար չի համարում պլանավորել աղբային գազի կլանման կամ այրման կայանքի կառուցումը, քանի որ դա կապված է լուրջ ֆինանսական ծախսերի հետ: Երբ պարզ կդառնա աղբի իրական կազմը /մորֆոլոգիա/ և քանակները, աղբավայրը շահագործող կազմակերպությունը կսկսի կուտակել որոշակի միջոցներ այդ նպատակի համար կմշակվի նախագիծ:

Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերում, թափոնների ծածկման եղանակի կիրառման դեպքում՝ անօդ պայմաններում, մեթանի առաջացումը փոփոխվում է ժամանակի ընթացքում, սկզբնական շրջանում (մինչև 3-5 տարի) այն նվազագույն արժեք ունի, հետո աճում է՝ հասնելով իր առավելագույն արժեքին, և այնուհետև 25-30 տարվա ընթացքում նվազում է: Կիսաքայքայման ժամանակը կարող է տևել մինչև մի քանի տասնյակ տարի: Մեթանի արտանետումների հաշվարկը ՇՄԱԳ-ում կատարվել է "Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի" (ԿՓՓՄԽ) 2006թ. Ուղեցույցում բերված եղանակով: Ուղեցույցով առաջարկվում է օգտագործել բազմաթիվ տվյալներ և ազգային գործակիցներ, որոնք Հայաստանում սահմանված չեն: Խիստ անորոշ և փոփոխական են ԿԿԹ տարեկան քանակները և դրանց բաղադրությունը: Ելնելով նշված հանգամանքներից ՇՄԱԳ հաշվետվությունում օգտագործվել են Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի տվյալներ /1990-2017թ.թ. հաշվետվության փորձագիտական գնահատման արդյունքում ստացված գործակիցները և հիմնավորումները/: ԿԿԹԱ տեղադրվող աղբի ծավալները հաշվարկելիս հիմք է ընդունվել քաղաքային բնակչության թիվը, քանի որ չկան հավաստի տվյալներ գյուղական բնակավայրերում իրականացվող աղբահանության ցուցանիշների վերաբերյալ: Հաշվարկներում աղբի տարեկան քանակը Սասունիկի աղբավայրի համար ընդունվել է առավելագույնը 29000 մ³ կամ 7250 տ: Ընտրվել է ըստ Կովի ընկերության կանխատեսման՝ 2025 տարվա ցուցանիշը, այն հիմնավորմամբ որ մեթանի առաջացում կսկսվի 3 – 5 տարիների ընթացքում: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ կանխատեսումային արտանետումների քանակները

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТНЫЙ
COMMISSION
OF EXPERTS

կկազմեն՝ 0.2465 հազ.տ/տարի քայքայվող ածխածին, 0.23 հազ.տ/տարի, կամ 230 տ, կամ 7.3 գ/վրկ մեթան: Ըստ կադաստրի հաշվարկների 2017 թվականին ՀՀ տարածքում ԿԿԹ քայքայումից առաջացած արտանետումների ընդհանուր քանակը կազմել է 364.3 հազ. տ: Հաշվարկի արդյունքում առաջացած գազը կարող է արտանետվել մթնոլորտ շատ դանդաղ՝ ինքնաբերաբար կամ կարող է իրականացվել գազերի հավաքում և այրում:

Սասունիկի աղբավայրի շահագործման արդյունքում մթնոլորտային օդին հասցվող տարեկան տնտեսական վնասը հաշվարկված 181700 դրամ կկազմի՝ մեկ հարյուր ութսուն մեկ հազար յոթ հարյուր դրամ: Աղբավայրի տարածքում հողածածկն արդեն իսկ խախտված է, օգտագործվում է աղբավայրի համար, տնտեսական վնաս չի հաշվարկվում

Աղբավայրի շահագործման ընթացքում շրջակա տարածքների վրա հնարավոր ազդեցությունը կարող է պայմանավորված լինել նաև աղբի քայքայման արդյունքում առաջացող արտահոսքերով /զտվածք/, որն առաջանում է աղբում պարունակվող օրգանական միացությունների քիմիական վերափոխման արդյունքում: Զտվածքի կազմը ժամանակի ընթացքում փոխվում է, այն շատ աղտոտված է լինում առաջին փուլում: Այս կազմով զտվածքի վնասազերծման համար նախագծով նախատեսված է աղբի խոնավացում՝ աղբի չորացումը և ինքնաբռնկումը կանխելու նպատակով: Զտվածքը հեռացվելու է աղբավայրի ցածրադիր գոտում առկա ավազանում, որն ունի բնական կավային շերտով հատակ /ինչով պայմանավորված ստորգետնյա ջրային հորիզոնների աղտոտումը կբացառվի/ և այն նախատեսված է օգտագործել աղբի ջրցանի /խոնավացման համար: Այդ նպատակի համար օգտագործվում են նաև ավազանում հավաքվող անձրևաջրերը և ձնհալքի հոսքերը: Աղբի խոնավացման համար նախատեսված է հատուկ պոմպի և ճկուն խողովակների տեղադրում:

Քանի որ տարածքում բացակայում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, աղբավայրի շահագործման համար պահանջվող ջրամատակարարումը /տնտեսակենցաղային և խմելու նպատակով/ կիրականացվի բերովի ջրով: Որոշ չորային տարիներին զվածքի գոլորշիացման պայմաններում կարիք կլինի ներկրել լրացուցիչ տեխնիկական ջուր՝ աղբի ջրցանման համար: Ջուրը /որի ծավալը կկազմի՝ օրական 6մ^3/օր, շոգ և չոր օրերին՝ ընդհանուր 180 մ3 ծավալով/ կներկրվի Աշտարակ քաղաքի ոռոգման ցանցից, համայնքի հետ համատեղ պարտավորությունների շրջանակներում:

Տնտեսակենցաղայի արտահոսքը կհավաքվի այդ նպատակի համար տեղադրված կոնտեյներում, որը պարբերաբար կդատարկվի մոտակա կոյուղու ցանց: Ստորգետնյա տարածքների աղտոտում չի սպասվում, քանի որ աղբավայրի տարածքի ստորին հատվածը բնականորեն պատված է կավային շերտով:

Հաշվի առնելով, որ աղբավայրը փաստացի շահագործվում է ավելի քան 7 տարի, հողածածկը արդեն իսկ վնասված է և սանիտարական աղբավայրի կազմակերպման ընթացքում լրացուցիչ հողածածկի վնասում չի նախատեսվում: Աղբավայրի շահագործման ժամանակ աղբատար մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն ներհամայնքային ճանապարհներին: Սակայն հաշվի առնելով երթերի միջին օրական թիվը /3 – 5 երթ/ այս քանակը չի կարող էապես ազդել ճանապարհների երթևեկության վրա;

Աղբավայրի փակումից առաջ մշակվելու է փակման ծրագիր, որը կներառի տարածքի բարեկարգման, ռեկուլտիվացիայի, մոնիթորինգի և այլ միջոցառումների իրականացում: Աղբավայրի փակման հետ կապված բնապահպանական որոկները պայմանավորված են այն հանգամանքով, որ կպահանջվի 30 տարվա

վերականգնողական շրջան, քանի որ զտվածքների և կենսագազի առաջացումը կարող է շարունակվել 50 տարի կամ ավել: Աղբավայրի փակումից կամ կոնսերվացումից հետո շարունակվելու է իրականացնել գազահավաքման և զտվածքի վերահսկման աշխատանքները:

Սասունիկի աղբավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանուն: ԲԿՊ-ն ներառում է անհրաժեշտ դիտարկումներ, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել աղբավայրի շինարարության և շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու համար: Սասունիկի աղբավայրի հրապարակում և հարակից տարածքներում ախատեսված է մոնիթորինգի իրականացում /օդերևութաբանական տվյալներ, ստորերկրյա ջրեր, կենսաբազմազանություն, հողածածկի նմուշառում/, ինչը հնարավորություն կտա ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու աղբավայրի գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վնասակար ազդեցությունների կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Եզրափակիչ մաս Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Աշտարակ համայնքում և Սասունիկ բնակավայրում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարություններից և Արագածոտնի մարզպետարանի կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել:

Սասունիկի սանիտարական աղբավայրի շահագործումը ինքնին լուծում է առողջապահական, բնապահպանական և սոցիալական խնդիրներ: Աղբավայրը կապահովի հողի, մթնոլորտի, մակերևութային և ստորերկրյա ջրերի պահպանումն աղտոտումից՝ կանխելով պաթոգենների, կրծողների և միջատների տարածումը: Աղբավայրի շահագործմանն առնչվող բնապահպանական խնդիրները հիմնականում վերաբերում են զտվածքների առաջացմանը և աղբավայրում գազերի արտազատմանը, որի համար նախագծում առաջարկվել են արդյունավետ լուծումներ: Աղբավայրի շահագործման համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Անձնակազմը ամբողջությամբ կներգրավվի համայնքային բնակչությունից: Աղբավայրը շահագործող ընկերությունը կմասնակցի նաև համայնքներում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման և ֆինանսավորման գործընթացներին:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը Հայաստանի Հանրապետության տարածքում կիրարկելու մասին» N 321-Ա հրամանի պահանջներով:
- Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամաններով ստորագրված պահանջներով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ՀՀ Ջրային օրենսգիրքի պահանջներով և ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել Սասունիկի աղբավայրից կենսագազի ստացման նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը և ՇՄԱԳ հաշվետվությունը:

3. Անհրաժեշտ է աղբավայրից արտանետվող գազերի, զտվածքների, աղբի խտացման հետևանքով առաջացող կեղտաջրերի համար մշակել վերահսկման մեխանիզմներ՝ կարևորելով կանոնավոր մշտադիտարկումների իրականացումը և ըստ անհրաժեշտության նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:

4. Աղբավայրի շահագործման փուլում ապահովել՝ ՇՄԱԳ-ում նախատեսված մշտադիտարկումների իրականացումը՝ բացառելու նպատակով շրջակա տարածքների, ջրային, հողային ռեսուրսների և օդային ավազանի հնարավոր աղտոտումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման աշխատանքների շրջակա միջավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան

ՀՀ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN